

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ՓԼԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Պուսակցութեան նախորդ Կենտրոնի պաշտօնական Հռախրագրով՝ ներկայ Սեպտեմբերին 1-օն դօնում գումարվեցաւ Պուսակցութեան Պատգամաւորական Բնդհանուր Ժողովը, որ բաղկացած էր տասնեւմեկ պատգամաւորներէից և խորհրդատու անդամներէից, և ի դիտութիւն Հնչակեան Պուսակցութեան Մասնաձիւղերին յայտարարվում է, որ իր չորրորդ նիստում քննելով Հնչակեան Պուսակցութեան իննամեայ գոյութեան ժամանակամիջոցին ունեցած Մուտքի և Ելքի հաշուետուարները, Պատ. Բնդհ. Ժողովը գտաւ նրանց ձիշտ ու կանոնաւոր:

Յայտարարում է նմանապէս, որ նոյն նիստում Պատգամ. Բնդհ. Ժողովը հաստատեց նաեւ, որ Հնչակեան Պուսակցութեան իննամեայ գոյութեան միջոցին՝ Պուսակցութեան, որպէս և «Հնչակ», «Եպսոակ» և «Պաղատար» պարբերական հրատարակութիւնների հիմնադիրներ ու փարիչներ Պ. Աւետիս Ազարբէկեանց և Տիկին Մարիամ Ազարբէկեանց նուիրել են Պուսակցութեան 18,709 Ֆրանկ, ինչպէս և ձեռնարկելով «Հնչակ»-ը որպէս սեփական թերթ, նրա իննամեայ ծախքերն էլ հոգացել են իրանց միջոցներով:

Պատգ. Բնդհ. Ժողովը յայտարարում է նաեւ, որ՝ համաձայն Պուսակցութեան Ծրագրի և «Ներքին Կանոնադրի տրամադրութիւնների» նա ձեռնարկեց Պուսակցութեան Կենտրոնի նոր անդամների ընտրութեան: Ընտրվեցան եօթ անձեր՝ համաձայն նոյն «Ներքին Կանոնադրի» և կազմվեց Հնչակեան Պուսակցութեան նոր Կենտրոն, որի պաշտօնավայրն է՝ 1-օնդօն, 22, Ormiston Road, Shepherd's Bush, W.

Պատգ. Բնդհ. Ժողովը հարկ է համարում յայտարարել այդ առիթով,

Որ՝ բացարձակ միաձայնութեամբ վերընտրվեցան անդամներ Կենտրոնի Պուսակցութեան երկու հիմնադիրներ Է. Ետիս և Մարիամ Ազարբէկեանց: Սակայն հակառակ այդ վերընտրութեան, Ազարբէկեանցները տալով՝ երկար պնդեցին իրանց հրաժարականների վրայ Կենտրոնի անդամակցութիւնից, և Պատգամաւորական Բնդհ. Ժողովն անդամների միաձայն կրկնակի թախանձանքներից յետոյ միայն կարելի եղաւ աջողել նրանց յետ առ-

նել տալ իրանց հրաժարականները:

Հնչ. Պուսակցութեան Պատգ. Բնդհանուր Ժողովի կողմից:

Նախագահ՝ ՀՄԱՅԵԱԿ ԽՈՒՇՊՈՒԼԵԱՆ:

Քարտուղար՝ ՄԱՐԻՄԵԱՆ:

17. Սեպտեմբերի 1896. 1-օնդօն.

ՆԱԽԱԶԳՈՒԹՈՒԹԻՒՆ.

Հնչակեան Պուսակցութեան Պատգամաւորական Բնդհանուր Ժողովն իր նիստերում բացեց քննութիւններ Պուսակցութեան մէջ վերջերս տեղի ունեցած այլ և այլ անց ու դարձերի մասին և իր բոլոր անդամների միաձայնութեամբ կայացրեց հետեւեալ որոշումներն ու վճիռները, որ և իր ժամանակին պաշտօնական կերպով հաղորդեց Հնչակեան Պուսակցութեան Մասնաձիւղերին.

Պատգ. Բնդհ. Ժողովը Սեպտեմբեր 12-ի նիստում վկայութիւններով ու վկայութիւններով քննութիւն բացեց Արփիար Արփիարեան, Միհրան Տամատեան, Անտօն Ուշտունի անուն անձերի և դրանց գործակիցների ընթացքի նկատմամբ, որ նրանք բռնած են Հնչ. Պուսակցութեան գոյութեան, նրա սկզբունքների և նրա շահերի դէմ: Քննելով, գտաւ կատարելապէս հիմնաւոր այն վճիռը, որով Արփիար Արփիարեան անձը դեռ անցեալ մայիսին պաշտօնապէս արտաքսված էր Պուսակցութիւնիցս, որի շարքերում նա ուղղել էր դրանից կէս տարի առաջ, և առանձին նկատողութեան առաւ այն, որ Արփիարեանի դէմ արձակված վճռադրի տակ Պուսակցութեան նախորդ Կենտրոնի անդամների հետ՝ նրա խորհրդատու անդամների թրւում կան նաեւ Տամատեանի, Աղասիի և Ապահի անունները: Այնուհետեւ Պատգ. Բնդհ. Ժողովը հաստատեց իրիւ լիովին ձշմարիտ ու անհերքելի այն ծանրակշիռ հիմունքներն ու վճիռը, որոնց զօրութեամբ Պուսակցութեան նախորդ Կենտրոնը հարկ և անհրաժեշտ էր տեսել անցեալ օգոստոս 26-ին անել «Պաշտօնական Յայտարարութիւն», որով այժմ Արփիարեանի գործակից դարձած՝ Մ. Տամատեան, Ուշտունի, Աղասի, Մ. Սիւլադեան, Զ. Օհանջանեան և դրանց գործակիցներ՝ այլ ևս չեն կարող ոչ մի առընչութիւն ունենալ Պուսակցութեան հետ և հոչակվում են Պուսակցութիւնիցս արտաքսված:

Պատգ. Ընդհ. Ժողովը շտապում է նախազգուշացնել նաև, որ այդ արտաբերված խմբակը Հնչակեան Առևտրականության «Ընդհ. Ժողով» անունն տակ խաբեբայական ու կամայական ժողովներ է արել, և այդ խմբակային հաւաքումների միջոցին, համաձայն գտնվելու համար հայոց խողխողիչ սուլթանի և սրա պաշտօնեաների բաղձանքին, «վճիռներ» ասված՝ ինչ-ինչ անհեթեթ ու զառանցական, որպէս նաև չարամիտ ու դաւաճարական արարքների է դիմել, ձգտելով շփոթել և պղտորել հայ հասարակութեան կարծիքը:

Պատգ. Ժողովը նախազգուշացնում է նոյնպէս, որ այդ խմբակն այժմ էլ լոյս է բնծայել մի կեղծ Հնչակ, ջանալով նրա թիւն ու արտաբերել նմանեցնել իսկական «Հնչակի» թերթին, ձգտելով շփոթեցնել հայ հասարակութիւնը, ոտնակոխ անել իսկական «Հնչակ» հրատարակման իրաւունքը, իր ձեռքը գցելով՝ շահագործելու «Հնչակի» անունը, յարձակումներ անելու նրա հիմնադիր-խմբագրի դէմ, ըստ որում այդ վարմունքով խկապէս նա կատարած է լինում թիւրք թշնամի կառավարութեան երկարամեայ շոյած միտումները: Միևնոյն ժամանակ այդ խմբակը Հնչակ անունն տակ կեղծ թերթ հանելով, առաջ է գալիս մէկ ուղղութեամբ, որ բաժարձակապէս դաւաճանութիւն է «Հնչակի» և Հնչակեան Առևտրականութեան ըսկբունքների դէմ: Ուստի սրանով զգուշացնում ենք հայ հասարակութեանը չը խաբվել ու զոհ չըլնալ այդ ստոր կեղծիքին ու ազգակործան դաւերին և ամեն կերպ զոյշ լինել այդ ալֆարիական խմբակից, որի մէջ գտնվում են խիստ տխուր և ազգադաւ անցեալի ու արարքների տէր անհատներ:

Հնչ. Առևտրականութեան Պատգ. Ընդհ. Ժողովի կողմից՝
Նախագահ՝ ԱՌԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԿԻԱՆՆԵՍ.
25 Սեպտեմբերի 1896. Լօնդօն.

ՄԵՐ ԳՈՐԾԸ.

Մենք լողում ենք քաղաքականութեան անորոշութեան տիղմում: Առտորածների առաջին կասաղութիւնը հազիւ սկսել էր իջնել, երբ, թէև ազգային ոխով ու վրէժխնդրութեամբ լի զգացման դրդումով, բայց բոլորովին անտեղի ձեռնարկով և անհաշիւ կերպով, ձեռքերի խորշում սեղմված ռուսներն են նետվում օդի մէջ: Թշնամին, միշտ փնտռող ու ստեղծող պատրուակների ու առիթների, նորից հրաման է արձակում անել այն, ինչի համար վաղուց արդէն հրաման էր տվել: Եւ ահա մենք նորից շարված ենք մեր արեան հեղեղի ամենաբուռն յորձանքում, և դրա հետ միասին,

ռուսների դործածութեան շնորհով, մեր ճակատին դրոշմված ենք տեսնում անհեթեթ զրպարտութիւն, թէ հայ յեղափոխականներն անիշխանականներ ենք:

Եւ այս անգամ այլ ևս Հայաստանի անյայտ խորերում չէ, որ գլորվում են այդ անվերջանալի դարձած եղբուրեան տեսարանները: Նրանք կատարվում են թիւրքական մայրաքաղաքում: Եւ այս անգամ էլ, որպէս միշտ, անմեղ, անպատասխանատու, թշուառ հայ բազմութիւնն է, որ ընկած է թիւրքի մահակի հարուածի տակ:

Եւ եւրոպական սէրութիւնների աչքի տակ իսկ՝ այլ ևս մարդը չէ՝ որ սպանում է մարդուն, այլ ևս ֆանատիկոսը չէ՝ որ մորթում է իր զոհին: Մէկ ամբողջ պետութիւն կատարում է մարդկային զարհուրելի հեկատոմբներ մէկ ամբողջ ազգի վրայ՝ կարծես մեծ պետութիւնների ներկայացուցիչների բարեհաճ հովանաւորութեան ներքոյ:

Եւրոպական քաղաքականութեան ջեղուխտութիւնն ու հիպոկրիտութիւնը հայկական խնդրի նկատմամբ երբէք չէ եղել այնքան ցինիկապէս ակներև, որքան այժմ: Մէկ անհատ, մի մարդ, որ ամեն յատկութիւն ունի հրէշի տեղ ընդունվելու, խելացնորված չը գիտենք ինչ արինալի խորհրդով, իր որջում յղանում է արհաւիրալի ջարդերի երկայն շարք, և իշխանութեան դժոխային զէնքն իր ձեռքին, հզօր մի հարուածով զարնում է պատահած ամբոխի գլխին, ամեն կողմ սփռելով մահ, և ապա պարծենում իր ոճիրով, իբրև եւրոպական քաղաքականութեան համար արած մի կզակի ու բարձր գործով: Եւ այդ բոլորից յետոյ դարձեալ նա շարունակում է ծանաչվել եղբայր եւրոպական պետութիւնների թագակիրների կողմից.....

Բայց այն մարդը, որ «մեծ ոճրագործ» է, ևս առաւել երբ այդ մարդն ինքնիշխան է և ուրեմն անսահման իրաւունքի տէր, պէտք է դրվէ այնպիսի պայմաններում, որ միջոց չունենայ վերսկսելու իր ոճիրները: «Մեծ ոճրագործ» և, վերջին հաշւով, հիւանդ խելացնոր՝ նրան, այդպիսի մէկին, պէտք է զրկել այն զէնքերից, այն իշխանութիւնից, որով նա միջոց է գտնում ամենասոսկալի ոճիրներ անելով մարդկային ցեղի դէմ, շարունակել մնալ անպատիժ և սպառնալ միշտ խաղալու իր դահձային դերը:

Արդարև այդ չէ, անտարակոյս, եւրոպական պետութիւնների հայեացքը, որ տողորված են իրանց ներքին ու արտաքին նիւթական շահերով և որ միմիայն այդ շահերն են ծանաչում իբրև առաջնորդ իրանց քաղաքականութեան: Եւ մարդասիրութիւն չիմացող այդ պետութիւնների շահերի շնորհով և այդ պետութիւնների շահերի փոխադարձ հակառակութեան պատճառով՝ մար-

դատականների անամօթ սուլթան-մարդաստանը բազմաժ Է գեո իր գահի վրայ և գեո այսուհետեւ Էլ իր շարունակէ հանգիստ կերպով վայելել իր աւազակային իշխանութիւնն ու փառքը: Չնայ տեղն է Ղալաթսոնի բերանից դուրս պրծնում անգլիական հասարակութեան խղճի խայթի աղաղակը հայկական ջարդերի պատճառով: Գո՛ւր տեղն է նոյն Ղալաթսոնը ճգնում համոզել եւրօպական պետութիւններին ընդունել «մարդասիրական» քաղաքականութիւն, մի քաղաքականութիւն, որ իսկապէս գոյութիւն չունի: Գո՛ւր տեղն է մեծ Օսթրոնին այժմ իր նետով շեշտակի լարում սուլթանի սրտին «Մեծ Ոճրագործ» անունը, այդպիսով անմահացնելով պատմութեան էջերում այդ արժանաւոր ածականը: Գո՛ւր տեղն է յուզվում ու բողոքում եւրօպական հասարակաց կարծիքը, պահանջելով սուլթանի գահնկեցութիւնը: — Եւթ ամենը չեն կարող խախտել այն յենարանը, որն այսօր կապում են եւրօպական քաղաքակիրթ կոչված պետութիւնները սուլթանի փառքի արձանի համար, որ կանգնել է այս վերջինս բիւրաւոր հայերի կմախքներից:

Եւթ է ներկայ քաղաքական լուպէն, և այդ է եղել նա վերջին ամբողջ մի տարւայ ընթացքում, թէև տարբեր-տարբեր կերպարանքի տակ:

Եւ մենք ուղղակի դնում ենք հարցը, միշտ հին հարցը, թէև քաղաքական փոփոխվող հանգամանքների շնորհով Էլ միշտ նոր հարցը. — ի՞նչ պէտք է անենք, որ գտնվում ենք ըստ երևոյթին անելանելի օղակի մէջ, որի շրջանակը բոցավառված է, որ կարծես՝ սկիւռի նման ընկած անիւի մէջ՝ պտտվում ենք համաերևոյթ, թէև խճճված հանգամանքների շրջանի մէջ: Մեր առջև դրված է երկու որոշ դրութիւն: Մի կողմից այն, որ եւրօպական պետութիւնների շահերն են առաջնորդ իրանց քաղաքականութեան և, ուրեմն, հայկական դատի բաւարար լուծումն ուղղակի կապ ունի այդ իշխող շահերի հետ: Միւս կողմից տարբեր պետութիւնների տարբեր շահերն Էլ իրար մէջ գրտնվում են փոխադարձ հակառակութեան մէջ, որով, ուրեմն, հանգամանքները տարօրինակ կերպով բարդ են մեր խնդրի լուծման համար: Եւ այդ դրութիւնների ներկայութեանը զօրդեան հանգոյցը կտրելու միջոցն Էլ նոյնքան դժուար է, որքան բարդ են այդ դրութիւնները: Եւթէ քսան մարդու ձեռքով նետված ուռւբերը սուլթանանիստ քաղաքում՝ պատրուակ են դառնում կոտորածի և այլալիս կոտորածներով է, որ կարծում ենք կրտրել զօրդեան հանգոյցը, դա դառնում է մի տարօրինակ յոյս — անվերջ ջարդերի միջոցով ձեռք բերելու դրական արդիւնք, մի յոյս, որ, ամիսներ ընթացքում տասնեակ հազարների արեան ապարդիւն թափվելու փաստը մեր առջև լինելով, ո՛չ մի կերպ

չէ կարող արդարանալ: Միւս կողմից՝ եթէ կարծում ենք ընդարձակ ծաւալ կամ բացառիկ, եւրպակի նշանակութիւն չունեցող՝ յեղափոխական մանր ձեռնարկներով ջանալ հասնել մեր դատի լուծման, այդ Էլ նշանակում է բոլորովին աննկատ թողնել քաղաքական ներկայ հանգամանքները և եւրօպական աէրութիւնների շահերի ներկայութիւնն ու դրանց հակառակութիւնն իրարու մէջ: Իսկապէս հէնց այդ քաղաքականութեան դրութիւնն է և դրա լուրջ քննութիւնն է, որ ամենից առաջ պէտք է ունենանք աչքի տուցել մեր ամեն ձեռնարկների նախադժման ու գործադրութեան համար. դրա համեմատ է, որ, միշտ հաւատարիմ մնալով մեր նպատակին, պէտք է յատակագծենք մեր ձեռնարկները և ընտրենք այդ ձեռնարկների կատարման համար քաղաքական յարմար լուպէ: Բաւական չէ այդ, մենք պէտք է այդ քաղաքական հանգամանքների համեմատ Էլ որոշենք ու գծենք մեր անելիք յեղափոխական ձեռնարկների բնաւորութիւնը, նրանց տալիք ծաւալի ընդարձակութիւնը, նրանց գործադրութեան վայրերը:

Եհա դրանք են այն խնդիրները, որ այսօր դրված են հայ յեղափոխականի դիմաց: Վրանց լուրջ լուսաբանութիւնն ու նպատակայարմար որոշումն Էլ պէտք է գծագրէ այժմ յեղափոխական գործունէութեան ընթացքն ու տակտիկան, որ, ի հարկ է, միևնոյն ժամանակ պէտք է միշտ համաձայն լինի մեր սկզբունքներին: Եւ միայն զլրանից յետոյ մենք կունենանք մեր առջև մի պարզված դրութիւն և մի խիստ որոշ ասպարէզ, որի վրայ անցած՝ մենք յեղափոխական համախմբված ոյժերին ու նրանց գործառնութիւններն, ևս աւելի քան մինչ այժմ, ամփոփած կը լինենք որոշ գրծագրված սահմանների, որպէս և գործունէութեան որոշ եղանակների ու տեսակների մէջ:

Վերջացնելով այսօր մեր խօսքը, հետաքրքրութեան համար, իբրև «անթիք», թերևս աւելորդ չէ յիշատակել հայկական դատի մէկ ուրիշ իբր թէ «լուծման» մատնացուցութիւնը, որ այսօր լսվում է այստեղից-այնտեղից: Հայ տըխրադէմ ասպետներ կան, — և դրանց թիւն այսօր բաւական առատացել է, — որ կարծիք են յայտնում, թէ ամենայնպէս մի բան է սուլթանի աղտոտ սրունքը շատ աւելի բարձր համարել՝ քան հայ ազգի շրթներն ու ձակատը և աւելի բարձր իսկ՝ քան երկինքը: Եւ այդ հիման վրայ՝ ահա նրանց եզրակացութիւնը. — Պէտք է, ինչպէս երբեմն արդէն արել են հայ «գործիչ» կոչվածներից ոմանք, «ներողադրեր, մեղայադրեր մատուցվեն վեհափառ սուլթանին. պէտք է այդ անել նաև հէնց ամբողջ ազգի կողմից — և արդէն Բարթուղիմէոս կոչված անժպիտ էակը խորիմաս-

տուլթեամբ այդ փառքը վաստակել է: — Դա այդպիսով, հարում են մեր ազգի ասպետները, մենք կարծանանանք սուլթանի բարձր զթուլթեան, բանի որ մենք յանցաւար (sic) ենք նրա առաջ: Դա մեր դասի այդ իմաստալից «լուծման» խօսքը մէկ անգամ լսելուց յետոյ, պէտք ունենք արդեօք այն լսելու երկրորդ անգամ: Դա թէ կայ աշխարհում բոլորովա՞ծ խելագարութեան կառնանք, դա, ի հարկ է, հէնց այդ խօսքն է, և եթէ կայ ազգադաւ պաղ ստորաբարշուլթիւն դա — դարձեալ այդ է:

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆ ԿԻԼԿԻԱՅԻՑ.

96, օգոստոս 10.

Պաշտօնաբարոյ վատ սուլթանի պաշտօնեաները. շարունակ ի քործ կը դնեն զանազան չարիքներ, որոնք ուղղակի բռնապետի հրամանների համաձայն, կը չարչարեն ու կը կեղեքեն հայերն ի Զոր-Մարզուան:

Յուլիս 16-28 ին խումբ մի գիշերապահ զօրքեր՝ Մանուկեան Պօղոսը սպաննելու համար կը յարձակին, որ կը հսկէր իր միրգերը: Նա հազիւ իրեղնքը ազատեց. բայց պարտեզի միրգերը ամբողջովին քաղեցին և անոր ծածկոցները անելով տարին: Նոյն օրը 8 պարտեզի պտուղ և միրգերը քաղեցին. թէպէտ հազարապետին բողոքուեցաւ բայց իզուր:

Յաջորդ օրը խումբ մը տաճիկ սրիկաներ կոխեցին Օձագլին՝ Բէլ-Կարապետի տունը, բայց բարեբաղդաբար դրացի հայեր և զօրքերը հաւարի հասնելով սրիկաներն հեռացուցին առանց տանուտէրին փնաս մը, կորուստ մը տալու: Հարկահաններու հարըստահարութիւնը ու կեղեքումները աննկարագրելի են: Զօրք-Մարզուանը 5-600 տունէ բաղկանալով, հազիւ ունի 100 բարեկեցիկ տուն. իսկ մնացեալը՝ օրական պարէնի կարօտ արդէն անոնք առօրեայ վաստակով և հողագործական աշխատութիւններով իրենց ապրուստը կը հալթայթէին. այս տարի այդ բոլորէն զըրկուեցան. բաց աստի 80 տունի չափ թալանուեցան ու հրդեհուեցան պատերազմի ժամանակ, և այսօր այս ու այն կողմ խեղճ ու կրակ կը մուրան: Գեռ այդ անտանելի վիճակը բաւ չի համարելով, ամէն օր 20-30 աղքատներ տուրքի համար պահականոց կը տարուին շնորհիւ ազգակործան ու դաւաճան Հայրապետի և գրագիր Սարգիս Աբիկեանի. և այդ տեղ ոմանց մինչև իրիկուն ձիու աղբ կրել կըտան շալակով, ոմանց երեսին մեղր և ռուպ քսելով տառուայ կիզիչ արևի դիմաց կը կանգնեցնեն և ոմանք մէկ ոտքի վրայ արևի տակ պահապան կը կարգեն և հակառակ պարագային կը խարաղանեն ոտքերը: Շատերի տան կարասիքը, որի մէջ կը պատրաստեն իրենց կերակուրը և ծածկոցները, որով կը պահպանեն իրենց մերկ մարմինը ցրտէն, գրաւելով կը տանին և պակաս գնով կը ծախեն. ծեծը, անարգանքը, լուտանք, նախատինք սովորական բաներ են: Վաստակի տուրքը (թէմէթթու) որ այս տարի երբեք չը պէտք էր վճարուեր, ընդհակառակը կրկինն ու եռապատին է եղած: Կալվածական տուրքը (Լիվաք), որ այս տարի պէտք էր ղեղծուեր, դարձեալ եռապատին է. քանի մը պարտեզներ թալմթիւ ծառեր կտրուեցան և պտուղն ալ

զօրքերը կը փճացնեն:

Տաճիկները երբ կը տեսնեն հայերիս լուսթիւնը տոկունութիւնը, յանիրաւի, առնելիք ունիմ այն ինչ կեաւութիւն վրայ տեսելով բռնի կը պահանջեն, եթէ չի տան կառավարութեան կը բողոքեն և պահանջածի տասնապատիկը կըստանան. ստիպեալ կը վճարէ հայր:

81-82-83 թուականների տասնորդները, որ կառավարութեան վրայ մնացած և վճարուած էր, այսօր կառավարութիւնը այդ երեք տարիների ամբողջ տասնորդները պահապէ (անվճար) կը ներկայացնէ և տուած է տօմարը Պէքտէշ անուն ոստիկանի մը ձեռքը. Պէքտէշը որին որ կը հանդիպի կը ձերբակալէ. կամ պահանջքը կստանայ կամ պահականոցը կուղարկէ. ով որ ցոյց տայ զօհանները (ստացագիր) կաղաւթուի, բայց ով կարող է ունենալ, վերջին 2-3 տարիների մէջ ոչ թէ զօհաններ, այլ զրամի մուրհակներ, առեւտրական տօմարներ ևն. ևն. պատրուակներ եղած էին թշնամու ձեռքը. ուր որ մի կտոր թուղթ կը գտնուէր ամիսներով, առանց հարցաքննութեան կը բանտարկէին. իւրաքանչիւր անհատ կարեւորութիւն չը տալով, իսկ շատեր այ երկիւղէն կամ վառած են և կամ հողի տակ թաղած փոտեցուցած են: Տաճիկ կառավարութիւնը այդ լաւ գիտնալով, տասնեակ հազարներով դրամ կը պահանջէ և անտանելի չարչարանքների, անասելի հայհոյանքների տակ ինչ որ ունի վաճառելով կը ստանայ:

Հայերը պահականոցէն արձակուելով ցրուեցան իրենց տները. և սակայն այսօր շատերը ծանր հիւանդութեամբ են բռնուած և անկողնի կը ծառայեն: Յիշեալ վերադարձողներէն Կէօքվանէսեան Թորոսը միասին տարած էր և զգեստների ծրարը. զինուորները կողոպտած էին և այդ առթիւ աղերսագիր մը տալու համար Բայաս գնաց: Այդ տեղ դատաւորը և բարձր պաշտօնեաները անասելի հայհոյանքներով և չի լսած նախատինքներով կը վերադարձնեն ասելով, թէ «մեր տունն քանդող, մեր տէրութիւնը տապալող կեաւութիւններն դատին պիտի նայինք, մենք կուգենք ձեզ ոչնչացնել և դուք դեռ իրաւունք կը փնտռէք»: Միւսները արել էին Գաւալճեան Մարտիրոսին, որ տարած էր փոսքը ձգելու մի աղերսագիր ճեպէլի Միթէսարըֆին: Անամօթ և անպատիւ սուլթանը՝ այսօր սոսկ Զոր-Մարզուանէն ինչ հազար մի նպաստ կը պահանջէ՝ օգնելու համար տաճիկաց անկեալ չքաւորներին, հրդեհուած կամ փլած մզկիթ ու գալոցներին վերանորոգել տալու. մինչդեռ հայերիս 15 միլիօնէ աւելի փնասը երբեք չի յիշեր:

Սուլթանի պահապան բեօթի զօրքերը, որ 800-ի չափ են այս տեղ, ամէնքն ալ Սէլանիքի գնչուներէն թշուառ են: Խրբէք զօրքի կերպարանք և զգեստ չունին. բոլորը գող և աւաղակներ են. բայց ինչ կը գողնան, — հացի փշրանքներ, հինցած աղտոտ շորեր, ոտնամաններ և այլն... ամէն օր տանեալներով կը փախչին իրենց հայրենիքը. գրէթէ մեծամասնութիւնը կը մուրայ. հայը նաեւ թուրքը անխտիր կը կեղեքուի զօրքերէն: Աշխարհիս ամենայնոք թշուառականը, խելագար Համիտը, արեան մէջ կը փնտռէ իր հաճոյքը, բայց անտարակոյս նա պիտի խեղդուի այդ արեան լճաւի մէջ... Հայերս կեղեքուեցանք, թալանուեցանք, կոտորուեցանք, բայց այսու հանդերձ, մենք կը մնանք բնորոպէս բարձր:

Ոչինչ չի մնաց կորցնելու. թշուառութիւնը, անօ-

Թու թիւնը և մերկութիւնը չափազանցուած է մեր գիւղացիների վրայ այսու հանդերձ, այդ բոլորը ոչինչ կը համարեն և ուրախութեամբ կը զօհեն ամեն բան՝ մինչև ստանալը մեր սրբազան իրաւունքներու:

Այդ անամօթ և եղբայրասպան Եւրօպան, աշխարհիս ամենավայրենի, բայց քաղաքակիրթ անունը կրող վեց մեծ տէրութիւնները անտարբեր գտնուելով հայկական դատին նկատմամբ՝ հայերի կոտորածներով քէյֆ կը սարքեն, անամօթ Եւրօպայ... Ամէն օր, ամէն ըոպէ դէպքեր և սպաննութիւններ պակաս չեն լինիր, իսկ Եւրօպական մարտանաւեր Ալեքսանդրէտի առջև կերթնեն և առանց մի ամենափոքր ուշադրութիւն դարձնելու:

Գրուած տեղեկագիրները աստուածաշունչ գիրք մը կը կազմեն և այդ բոլորը քողի տակ կը մնան:

ՆԻԶԱԿ.

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՇԻՑ.

Գերմանիկ, 1 օգոստոս 96.

Քաղաքիս և շրջականերու վիճակը համարեա նոյնն է ինչ որ առաջ: Թիւրք խուժանի, կառավարութեան պաշտօնեաներու և ոստիկաններու գրգռուած ու անհաշտ վերաբերութիւնը դէպի հայ ժողովուրդը միևնոյն է: Ոչ միայն շրջակայ քաղաքներու, այլ նաև մօտիկ գիւղերու հետ իսկ, առևտրական և այլ կենսական պետքերու համար հաղորդակցութիւն ունենալը անկարելի է դարձած: Քաղաքի փողոցներու մէջ, ճանապարհներու վրայ սպաննութիւններ, կողոպուտ, հարստահարութիւն ընդմիշտ անպակաս են և հասարակութիւնը երկիւղի մէջ է նորանոր դէպքեր և կոտորածներ առաջանալու առթիւ: Հաղաւոր ընտանիքներ թէ գիւղացի և թէ քաղաքացի ապրելու անմիջական միջոցներէ բոլորովին զուրկ, այսօր կը գտնուին ծայրայեղ չքաւորութեան և խեղճութեան մէջ: Միջև այժմ քիչ թէ շատ գրամ և ուտելիք կը բաշխուէր միսիօծարներու միջոցով, սակայն վերջերս դադարեցուցած են նաև նպաստներու բաժանիլը:

Արտորածէն յետոյ քաղաքիս բանաւորու մէջ մըշտապէս գտնուած են հարիւրներով խեղճ և անմեղ բանտարկեալներ, որոնք ենթարկուեցան անլուր և սոսկալի տանջանքներու զախթիւններու և փօխներու կողմէ: Զի կարելի ցոյց տալ մի յայտնի հայ, որ բանտարկուած և չարաչար կերպով տանջուած չը լինի: Ցամեակներով բանտարկեալներ չը կարողանալով դիմանալ թրքական գազանութիւններուն և կամ զանազան հիւանդութիւններուն՝ մեռան բանտերուն մէջ: Միայն 40-ի չափ հայեր, Զէյթունի ապստամբութեան միջոցին զրանցի մէջ գերի բռնուած և յետոյ ազատ արձակուած մի թիւրք զինուորական բժշկի ձեռքով իբր վրէժխնդրութիւն, թունաւորուելով զօհ գնացին:

Առանց ո և է բանաւոր պատճառի, մի քանի շաբաթ առաջ, Զէյթունէն տեղս բերին և բանտարկեցին Բօզլայի թաղէն 2 անգլիկացի օգետներ և Սարգիս և ուրիշ երկու հոգիներ: Սոյն վերջին երկուսը ամբաստանուած են իբր թէ հրացանով վերաւորեր են մի զին. օր, որը ուղեցեր է կարել Զէյթունցու ուռենին: Մի քանի օր առաջ հինգ մարդիկ ևս բերելով Մարաշ բանտարկեցին, որոնց մէջ կը գրանուէր Հիւլիկիցի Կարապետ անունով երիտասարդը իր եղբայրը և երեք Գոնուղցիներ: Ասոնց մասին կը խօսուի թէ Հալէպ պիտի ուղարկուին:

Զէյթունի ընդհանուր հրամանատար Էդհէմ փաշայի մէկնելէ յետոյ՝ երեք վաշտ զինուորներով Զէյթուն կը մնայ Ալի պէկը, որը այժմ, սուլթանի իրաւունքով Ալի փաշա դարձաւ և Գարա-կիւլիւր օղլի անուանով մի Մարաշի թուրք ևս իբր գալմաթամի փոխանորդ: Լուր տարածուած է թէ մի Յոյն իբր Զէյթունի գալմաթամ որոշուած է, սակայն մինչև այժմ տեղս չէ հասած:

Զէյթունի վրայ բալող մեծ բանակի միայն Զ. Դուռնիայի կողմերէն եկած վաշտերը հեռացան. իսկ մնացեալները Ուլիիոյ գաւառի շուրջը գրեթէ պատած են: Ինչպէս. երեք վաշտ Հաճին ուղարկուած է, երեք վաշտ Մարաշ, մի վաշտ Էլպէսթան մի վաշտ Կօկիսօն, Կոպան, Ֆրընուզ, մի վաշտ Ենիճէ-գալէ, Տէրէ Զաթը, Ճիհանի վարի և վերի կամուրջները ևն. Յուլիս 11-ին վերի կամուրջի զինուորները Ուլիա գնացին զօրանոցը վերաշինելու համար. կըսուի թէ զօրանոցը շախ-կինէն բաւական մեծ և ներքին ալ ջօի ամբարներ պիտի շինուին: Ուլիիոյ գլխաւորներէն հաւատարմներն ու անձնուէրները խիստ ուշադրութեամբ զոյժ կը լինին որ ժողովուրդը զօհ չը գնայ կառավարական դաւերուն և խաբեբայութիւններուն. մինչև այժմ թող չեն տուած որ գիշերները թրքական զինուորները քաղաք մտնեն պահպանութեան համար: Այդ գլխաւորներու մէջ կը գտնուին այնպիսիներ, որոնք հակառակ ժողովրդի շահերուն գործիք են դարձած թիւրք պաշտօնեաներու ձեռքը. ասոնց անունները առ այժմ չենք ուղեր յիշել այս տեղ:

Այժմ Մարաշու մէջ կը մնայ Միւշիւրը և գաղղիոյ հեւատուր: Յունիսի վերջին երկուշաբթի օրը երկրորդ և վերջին հարուածը պիտի ստանար քաղաքս. զինուորներն զէնքի գլուխ անցան և թիւրք խուժանը գրգռուած զինուեցաւ. ամենի բերանէն «կեա-վուրալը քէսէճէկը» բառերը կը կրկնուէին: Այս բոլորի պատճառը մեզ անյայտ էր և դարձեալ անյայտ պատճառով զինուորները յետ քաշուեցան, պաշտպանութիւնը ցրուեցան և կոտորածը յետաձգուեցաւ: Այս դէպքէ մի օր յետոյ Միւշիւրի հրամանով Խըրլախեանները երկու հարիւր ոսկի ծախսելով բոլոր թիւրք և հայ մեծերն ու արհեստագլուխները հըրաւիրեցին և կառավարութիւնը խոստացու ապահովութիւնը վերահաստատելու համար ամեն ջանք ի գործ դնել:

Հակառակ թրքական կառավարութեան սոյն խաբեբայ խոստումներու, քաղաքիս և շրջականերու վիճակը անտանելի աստիճանի մէջ կը գտնուի: Ամէն օր անպակաս են սպաննութիւն, եղեռներ, բռնաբարում ևն. յայտնի յանցաւորներ, մարդասպաններ անպատիժ և առանց երկիւղի կը պատին շուկայի մէջ: Էինգ-վեց օր առաջ Ենիճէ-գալէի մէջ մի հայ սպաննուեցաւ և այս դէպքի համար, իբր յանցաւոր բանտարկուեցաւ մէկ ուրիշ անմեղ հայ: Կազմա կոչուած տեղը Շաքար դարեցի, 22 տարեկան մի երիտասարդ կացինով սպաննուեցաւ. դարձեալ մէկ ուրիշ անմեղ ձերբակալուեցաւ: Զիջէկլի թաղէն մի հոյ պատանու պատիւը բռնաբարուեցաւ: Թուս մի քանի օր առաջ Քիլիլիւ փաղարան ճէհրի ժողովել գացող տասը Տէրքի հայ կիներ ու զաւակներ բռնուեցան թիւրքերու կողմէ և բոլորի պատիւը բռնաբարուեցաւ: Այս յայտնի յանցաւորներէ միայն մի քանիսը ձերբակալուեցան և իբր թէ աքսոր պէտք է ուղարկեն:

Շրջակայ բոլոր հայ գիւղացիները, որոնք հաւաքուած էին քաղաքս, վերջերս կառավարութեան հրամանով ցրուեցան իրենց գիւղերը, սակայն ոչ կանգուն տուն ունին ոչ կահկարասի ոչ ուտեստ և ոչ ալ վարուցան: Կառավարութիւնը նախապէս խոստացած էր բոլոր տները վերաշինել, սակայն, ինչպէս ամեն ժամանակ, այս անգամ ևս խաբելով կանցնի:

Վերջերս նոր հրաման տրուեցաւ թէ՛ Բերիոյ կուսակալութեան որ կողմերը մեկնելու լինին հայերը՝ պէտք է տանան անցած թեր, առանց որոնց անկարելի է գնալ մի որ և է մօտ քաղաք, և այս հրամանը այնքան խտուածութեամբ կը գործադրեն, որ ստիպուած ենք նոյն իսկ գիւղերը երթալու համար անցագիր ունենալ:

ՀՈՒՐ.

ՆԱՍՏԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԵՏԻՑԻՑ.

Ալեքսանդրէտ, 28 օգոստոս 1896.

Սնանկացած սուլթանի կառավարութիւնը իր անկուշտ փորի անօթութիւնը ծածկելու համար զանազան միջոցներու կը դիմէ արդէն կողոպտուած ժողովուրդը երկրորդ անգամ կողոպտելու համար. կը յուսայինք թէ այդ սուլթան կոչուած գազանը վերջապէս կշտացած կը լինի հայու արիւնով. ու դառն աշխատանքի արդիւնքով: Նա դարձեալ հրահանգներ կուղարկէ իր կեղերող արքանեակներուն՝ մնացած հայերու բերանի վերջի պատառն ալ խելու և իրենց ծակ կոկորդը լեցնելու: Թող ներուի մեզ սուլթանի կողմէն, երբ ասենք թէ՛ կոտորածներէ յետոյ տեսնելով եւրոպական կառավարութիւններու անհոգութիւնը՝ դարձեալ վերսկսաւ նախկին գաղանթութիւնները. մինչդեռ ինքը չը պիտի ուրանայ թէ՛ երբ է մի փոքր դադար առած:

Ամսոյ 6-18-ի օրը մի խումբ դատականներ խնդիր տեսնելի շուկայի մէջ պաշարեցին տեղիս նշանաւոր հայ յերի՝ Շամեան Տիգրանի և Սարգսի՝ վաճառականական խանութները. մի խումբ ևս ասոնց հօրեղբայր հաճի Պօղոս աղայի տունը, որ խնդիր տեսնելի հարուստ հայ անձնաւորութիւնն է, և որը ժամանակին Գարանդգ Գափուի դէպքի առթիւ 16 ամիս Ատանայի բանտը արգելուած մնաց իր որդւով և մի քանի դպրոցական երիտասարդներով: (Այս դէպքը հրատարակուած է իր ատենը «Հնչակի» մէջ): Այդ ատեն կարմիր ոսկիներու շնորհով հաղիւ հաղ աղատուեցան կառավարութեան ծանկերէն. բայց ահա այս անգամ ևս թիւրք կառավարութիւնը յիշելով այն նախկին փայլուն ոսկիները՝ մնասակար դրութիւններ փնտռելու պատրուակաւ յիշեալի տունն և խանութները խուզարկեց. բոլոր վաճառականական նամակներն ու գտնուած ամենամիօրը թղթի կտորներն անգամ իր հետ առնելով գնաց և հաճի Պօղոս աղան և եղբայր որդի շէթութեմը բանտարկեց: Այս ձերբակալութիւններէ զատ՝ շուրջ կայ թէ գեռ շատեր պիտի ձերբակալուին և շատ տներ խուզարկուին, որոնց հրահանգները արդէն տրուած է չալէպի կառավարութեան կողմէ:

Բէյլանի մէջ թուէս 8 օր առաջ տաճկաց մզկիթի և կառավարական շէնքերու դրանց մօտ փակցուած են եղեր յայտարարութիւններ տաճկերէն և հայերէն տառերով արձանագրուած, որոնք իբր ստորագրութիւն կրելով մի քանի տասնեակ յայտնի հայերու կողմէ՝ սաստիկ սպառնալիք կը կարգան թիւրք կա-

ռավարութեան և խուժանին: Այդ յայտարարութիւնները պատրաստուած և փակցուած են կառավարութեան պաշտօնեաներու կողմէ, որոնք այս եղանակաւ կուզեն նոր միջոցներ երեւան հանել հայերը կեղերելու համար: Եւ իսկապէս տեղուն գայմագամը, անմիջապէս, իր մօտ կը կանչէ պաշտօնապէս հայ կղերականները և մեծերը և ցոյց տալով յայտարարութիւնները կըստառնայ և կը պահանջէ շուտով հեղինակները գտնելով իրեն յանձնել. հակառակ պարագային պարտաւորուած է եղեր կապանքների տակ ուղարկել չալէպ: Խեղճ կղերականները յանկարծակիի գալով բոլորովին շուարած և անպատասխան կը մնան: Բէյլանի մէջ կառավարութեան խտուածութիւններն և կեղերութեմը այն աստիճանի է հասած, մի քանի շաբաթ առաջ 60 տան չափ հայեր կաթողիկոսութիւնը ընդունեցին միամտաբար յուսալով որ այդ միջոցով զեր պիտի մնան թիւրք կառավարութեան յօշոտիչ մեքենաներէն:

Թիւրք կառավարութիւնը մեզ անյայտ պատճառներով տեղս գտնուող երկու վտահայեր՝ Հայրապետ Պալեան փաստաբան և Գեղամ Տէր Գրիգորեան, որոնք միշտ յօգուտ կառավարութեան են աշխատած՝ արտաքսեց իրենց ծննդավայրերը. առաջինը Չոբ-Մարտուան, երկրորդը Մարաշ:

Թուէս 4 օր առաջ Զէյթունի նորընտիր քրիստոնեայ գայմագամը օսմ. շոգենաւով տեղս հասաւ՝ իր հետ ունենալով մի թիւրք փոխ-կառավարիչ: Հետեւեալ օրը մեկնեցաւ չալէպ, որ տեղէն ալ գնալու է Մարաշ և ապա Զէյթուն:

Ար լսենք թէ չալէպի մէջ և այլ տեղեր կառավարութիւնը մուստահաֆըզ զօրքեր կը հաւաքէ, սակայն միւս կողմ ոստիկանները և արգի զինուորները կը գտնուին խեղճ ու կրակ վիճակի մէջ բոլորովին անօթի և մերկ: Բացարձակ կերպով կը յայտարարեն ամեն տեղ իրենց դժգոհութիւնն ու զայրոյթը սուլթանի և իր կառավարութեան դէմ: 10 ամիսներէ հետէ ոստիկաններն ու զինուորները մի ամսական իսկ չեն առած. չը մեռնելու չափ կապրին ճոնապարհներու վրայ այլ և այլ տեղեր, նոյն իսկ քաղաքներու մէջ հայեր կողոպտելով ու թալանելով: Այս առթիւ ձայն բարձրացուցած են՝ եթէ վերջին ամսաթիւնն ալ չը վճարէ կառավարութիւնը, ստիպուած, իրենց զէնքերով պիտի քաշուին լեռները և աւազակներ դառնան՝ նոյն իսկ կառավարութեան դէմ:

Ար լսենք նաև թէ Այնթապի մէջ հայերը միշտ երկիւղալի դրութեան մէջ են. թիւրքերը նորանոր առիթներ ու պատրուակներ կը փնտռեն նորանոր դէպքեր և կոտորածներ առաջացնելու համար:

Առհասարակ Եւրոպական մարտանաւներ կը գրտնուին տեղոյս ջրերը: Անգլիական մի մարտանաւ մը՝ տապէս կըսպասէ. երբ մէկը մեկնէր միւսը կը յաջորդէր, սակայն ասկէ իբր 10 օր առաջ գտնուածը մեկնեցաւ և դեռ մէկ ուրիշը չը յաջորդեց: 4 օր առաջ Ամերիգական մի մարտանաւ եկաւ և կսպասէ. տեղս իբր ամերիգական հիւպատոս պաշտօնավարող մի անգլիացի վաճառական պաշտօնանկ լինելով իրեն յաջորդած է մէկ ուրիշը իբր կատարեալ հիւպատոս. և որպէս թէ յիշեալ մարտանաւը կըսպասէ յիշեալի գալտեսն:

Մի ժամանակ ճէպէլի միւթէսարըթութեան կառուածական հազարապետը 8-10 ձիաւորներով գալով, սպառնացաւ պահանջել 92 հազար ողջ դրամ՝ Նու-

Ֆուսը Մէթուս (տուրքի տօմարը չի արձա- նագրուած) ի անունով. 20րդ-Մարզվանի, Օճագլըի և Էօ- ղէրլիի հայերէն, որ վճարուած էր 3 տարի առաջ, մի- այն իւրաքանչիւր մարդ գլուխ 1 մէճիտ և 8 մէճալիք տնտեսներով միասին. բայց այսօր սպառնալիքի տակ կը պահանջեն: Հայ ժողովուրդը որ տեղէն պիտի կարենայ վճարել այսքան տուրքը երբ չունի նա ուսելու հաց և հագնելու շապիկ. այդ բոլորը խորհրդաւոր կեր- պով կը գործողութեն. երբ հայերը ընդդիմանան վճա- րելու, անմիջապէս պիտի հրապարակեն 20րդ-Մար- զվանը իբր պատամբ, և ձեռքերնին առիթ բռնելով կրկին յաճական պիտի դիմեն, մի բան որը տաճիկներ բացարձակ կը խօսին:

Անցեալ շաբթուայ մէջ տեղւոյ տեղակալն ու կա- ռավարական պաշտօնեաներ, տաճիկ սրիկաներ ձերբա- կալելու պատրուակաւ տաճկաց Էրզրն գիւղը գնա- ցին, որ կը բազկանայ 600 տնէ, բայց երբէք մարդ մը չի ձերբակալեցին: Այդ տեղ հաւաքուեր են դաղտ- նի շրջակայ բազմութիւ տաճիկ գիւղերի աղաները: Այդ գումարման մէջ իհարկէ խորհեցան անկեալ կառավա- րութեան և հիւանդ սուլթանին աջակցել, բայց ինչ կերպով. անտարակոյս, վայրագութիւններով...

(Գոստոս 5 երկուշաբթի օրը նախապէս Նա- ճառը չայ գիւղի բնակիչներէն (որ 8-9 ժամ 20րդ- Մարզվանի հիւսիս-արեւմուտքը կը գտնուի) եկած էին այստեղ լալիւր աղալու. 20րդ-Մարզվանէն, Էօղլըի և Օճագլըի 45-50 հոգի կը գնային Նաճառը և այ- լուր. ոմանք մի բանի չափ ցորեն ձարելու և ոմանք անձար մալով, հոգին բերանը առած կը գնային Մա- մէս թիալի (Միսիս) կողմերը կնճիթ (սուսամ) քաշե- լու և մի քանի փարա վաստակելու իրենց անօթի ըն- տանեացը համար: Երբ սորա կը հասնին Պուռնա- զի պահականոց, որ ծովեզերք և արմտեաց նաւահան- գիստ է, այդտեղ գտնուող ըէտիֆ զօրքերի գօլ-ա- ղասին և բժիշկը առաջինն զօրքեր հանելով կը վե- րադարձնեն: Անոնք ունէին ձեռքերնին կնքեալ անցա- գիւններ մուսթարի կողմէն. երբ 30 օր առաջ Ատա- նայի միւրալայը հոս կը գտնուէր տեղւոյ տեղակա- լի ու զին որական հազարապետի հետ որոշել և մու- նետիկ կանչել տուած էին, թէ մի տեղէն ուրիշ տեղ գնա- ցողներ պէտք է ստանան մուսթարի անցագիրներ. ինչքան կաղաչեն ու կը պաղատեն անօգուտ կը լինի: Այդքան բազմութեան մէջ կային նաև մանկամարդեր և տիկիներ: Այժմ 10-ի չափ զօրքերով յետս կը դարձնեն 4-5 ժամուայ հեռու աւազուտ ու քարոտ ճանապարհով. ամառուայ կիզիչ արեւը կրակէն աւելի կը վառէր անոնց մարմինները: 2ի ունեցողների ձին առ- նելով զօրքերը կը հեծնէին զոյգ զոյգ. հայերի ոտ- նամանները հանել տալով բոբիկ կը քալեցնէին:

Ինչպէս որ ձին կարող է արագ քալել, նոյն արա- գութեամբ պէտք էր գնային խեղճերը. մէկը որ մի քիչ կընկրկէր խարազանի հարուածներ կարկուտի պէս կը տեղային անոր գլխին: Իրիկնադէմին հազիւ հասան 20րդ- Մարզվանի պահականոցը: 2ի մոռանամ ասել գօլ-աղա- սիի անարգանքները՝ անցագիրները կրող ու գրողների համար, իր տեսակներովը, թէպէտ հազարապետէն և տե- ղակալէն յանդիմանուեցան առ երեսս:

ՎԻԵԺ.

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԻՑ.

Խարբերդ. 16 յուլիս, 1896.

Ասկէ առաջ Համիտիներու մասին արդէն գրած էի, թէ 2500 հոգի պիտի գայ այստեղ, բայց մինչ և այժմ եկողներու թիւը հազիւ 200-ի կը հասնի: Եւ այն ալ Իպրահիմ փաշայի հրամանատարութեան ներքեւ ութ օրուայ չափ տեղս մնալով Ցաւրասի ճա- նապարհով մեկնեցան Երզնկայ: Արսուի թէ ուրիշ խմ- բեր ալ կան, որոնք համախմբուելով Երիզայի մէջ՝ պիտի գնան Կ. Պոլիս:

Ամսոյս 18-ին Շաբիբ փաշան Մալաթիա գացած է, ուր 8 օր մնալով տեղս պիտի գայ: Հայերս ար- դէն ոչինչ չենք սպասեր, նաև լուսամիտ թուրքե- րէ շատեր հակառակ են ատոր այս տեղ գալուն, ա- ռարկելով թէ ուրիշ տեղեր ինչ ըրաւ և այստեղ ինչ պիտի անէ: Մեր աղբը այդպիսի աղոթական ցոյցերէ և խաբելութիւններէ չը խաբուիր այլ ևս. թող շահա- մու Եւրօպան միայն խաբուի այդ բոլորէն:

Իբրանան սաստիկ յուզուած է. կըսուի թէ Գա- մսկոս և Բէյրութ վտանգի տակ են. թէպէտ այս լուրերը վերապահութեամբ կը հաղորդենք:

Թուռէս մի քանի օր առաջ տեղիս մուսթահաֆըզ զինւորներէն մի մասը ժողովեցին, պատաճառը մեզ յայտնի չէ: Լուր է տարածուած նաև թէ խօճաներէն Համիտի պիտի գրեն և իրենց տեղերը պիտի թողուն:

Թուռէս 5 օր առաջ Մէղէրէն տեղս 200 ի չափ զէնք և ռազմավորք ուղարկուած է՝ խալապա- շին Սուլէյման փաշայի տունը, ուր կը նստի զօրքե- րու գլխաւորը: Զէնքերը հանելով՝ պարապ սնտուկները դրան առջև ձգուած էին. ճիշտ այսօր լսեցինք հաս- տատ աղբիւրներէ՝ թէ այդ զէնքերը խօճաներու բաշ- խուած է: Ինչ է շարժառիթը մենք ալ չը գիտենք. վերջապէս իթէ տեղիս շարժումներուն և անցուդար- ձերուն նայինք՝ թիւրք կառավարութեան անկումը ակ- ներէ կը տեսնուի:

Աշարները անցեալ տարուէն աւելի շատ պակաս գնով կը ծախուի, ան ալ թուրքերէն ոմանք կառ- նեն. տակաւին շատը ծախուած չէ. ոչ հայերու և ոչ ալ թուրքերու բով երբէք գործելու փափաք չըկայ. ամեն մարդ ժամէ ժամ բանի մը կըսպասէ.

ՄՈՒՆԶԸ.

ՆԱՄԱԿ ՊԵՅՐՈՒԹԻՑ.

Պէյրութ. 96 օգոստոս 9-21.

Քաղաքիս մէջ Մահմետական և քրիստոնեայ ժողովուրդներու թշնամութիւնը և ժառանգական ա- տելութիւնը իր խմորուած վիճակի մէջ է: Փոխադար- ձաբար թէ քրիստոնեաներու և թէ առաքիկներու կող- մէ յայտարարութիւններ կը փակցուին տեղւոյս գըլ- խաւոր հրապարակները: Հաղարէն աւելի զինեալ ոս- տիկաններ և 2 հազարի չափ հասարակ զինւորներ, ցե- րեկ և գիշեր անդադար կը շրջապային քաղաքի ամեն անկիւնները: Ամեն օր մեծ կամ փոքր դէպքեր ան- պակաս են. մի օր քրիստոնեայ մը կը սպաննուի, մե- կալ օր մահմետական մը: Թէև շատ կարելի կը թուի թէ տեղս մեծ խռովութիւն մը տեղի չունենար, բայց այս վիճակը չը կրնար երկար շարունակել: Այս վայ- րենի ժողովուրդը՝ թիւրքը, իր իրական շահերը հաշ- ուելու չափ քաղաքագէտ չէ. այս օրուայ մի պատառ.

հաջորդ վաղվայ մահէն նախադաս կը համարէ:

Տիւրքիներու խնդիրը. — Տիւրքիները ամէն կոիւններու մէջ բազմի պէս կ'ուեցան իւրաքանչիւր անգամին յաղթանակներ տանելով: Ամբողջ թիւրքական բանակը ցըրուեցաւ, այլ ևս դիմադրելու անկարող դատուեցաւ: Այժմ այնտեղ, համարեա, հանգստութիւնը կը տիրէ: Արչափ որ ստիպողական հեռագիրներ կը քաշուին 10-գունդ զինուորի գալստեան համար, անօգուտ, վստահի մեռած թիւրք զինուորներու թիւը 20-հազարը անցաւ ըստ ամենաստոյգ տեղեկութեան:

Հակառակ սոյն բացարձակ պարտութեան, տեղւոյս կառավարութիւնը անամօթաբար շաբաթը 3-4 անգամ մոնետիկ կանչել կուտայ, իբր թէ՛ Տիւրքիները չարաչար յաղթուած են և 5-10 հազար տիւրքիներ կոտորուած: Կը խրախուսէ ասելով՝ թէ քաջ եղէք իսլամներ, Տիւրքիները ոչնչացան ևն: Սակայն խեղճ թիւրք ժողովուրդը տեղեակ է իրականութեան և իր սրտէն ակն կը քաշէ ցաւալի, զի գիտէ որ համայն Դամասկոսը քաղեց Տիւրքիներու վրայ և յաղթահարուած հաւաքուած թողլով պատերազմի դաշտի վրայ իր զաւակներէն մօտ 2000 մեռեալ: Տեղացիներու մի մասը այն գաղափարը ունի թէ Անգլիա մէջ մտաւ խնդրուն և յանձն առաւ կատարելու Տիւրքիներու պահանջները:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ.

Լորէնս, 17-29 օգոստոս 69.

Արբան հայրենիքի մէջ տիրող թշուառութեանց և տաղանապնդու ծաւալը կընդարձակի, որքան արիւնասուն գաղանը՝ հայ տարրի արեան վերջին կաթիլը քամելու հնարքներ կը խորհի և միջոցներ ի գործ կը դնէ, նոյնքան Ամերիկայէն մեր եղբայրները իրենց նուիրական պարտականութիւնը կատարելէ խոյս տալու համար ճամբաներ կը փնտռեն:

Բացառելով աննշան թիւ մը մնացեալներէն շատերը՝ հայրենիքի մէջ նոր և անխուստիքի կոտորածի նշաններ կրկնաւորւն, անտեղի և անվայել պախարակումներ կը տեղան յեղափոխականաց դիմուն. հետեւաբար, յուսահատութեան մատնուած, ձեռնածալ նստած ու լարուած դրութեամբ հայրենիքէն դուրս գալու կոպտեն: Մի քանի խեղճուկներ ալ՝ սկզբունքի դասալիքներու հետ միացած նորանոր ընկերութիւններ կը կազմեն և փայլուն տիտղոսներով կը մկրտեն: Մըտնենք ուրիշ խաւ մը՝ յեղափոխական յաջողութեան վրայ ուրացող և ձախորդութեանց մասին տրտմողներ, միանգամայն յեղափոխական նորանոր ցոյցերու ջերմ համակիր. բայց երբ գործնական աջակցութիւն կը խնդրուի, սրտերին կը ծեծեն և Աստուած ցոյց կուտան, բայց և այնպէս ազգասէր են: Չը մոռնանք ամենէն խոշոր ազգասէրները՝ որոնք հայրենիքի ներկայ գոխային վիճակը դիտատեսելու միակ միջոցը, զայն Ամերիկայ գաղթեցնելը գտած են: Ահա Ամերիկայի հայ ազգասիրաց ցանկը: Ով զարմանալեացս, ազգագուշներն անգամ ազգասէր դարձած են, որոնց ձախատին վրայ եղած մատնութեան սեւ բիծը՝ դարերու յամրաբայլ ընթացքը չէ կարող սրբել: Եթէ այսպիսիներ ժողովուրդ մը ձակ տագրի միջութեանց մէջէն անաղտոյ դելու գերն ստանձնէին, ինչ պիտի ըլլար արդեօք անոր վախճանը. — ստիպութիւն, անբարոյականութիւն և անպայման կորուստ: Ազգեր՝ իրենց ազգային սրբազան իրաւունքներն ձեռք բե-

րած ատեն բարբարոսութենէ յօշոտուած և արեան գետերէ անցած են, ուստի ասոնք դրական փաստեր են՝ թէ արդարութեան և ժողովրդի իրաւունքի յաջողութիւնը յանդուգն և չարաչար աշխատութեան և զոհողութեան կը կարօտի. հազիւ հազ մերունդներ իրենց արեան և քրտինքին արդիւնքը կը վայելեն, ինչու որ ամեն մի սերունդ յաջորդին համար կը գործէ: Այս յոյսերով և համոզումով սողորուած, ծնունդն, եղբարք՝ ի գործ, մենք վերջին հրաւիրեալներն ենք ի խնջոյս ազատութեան. պէտք է ամեն մէկերս մեր տեղերը պատրաստենք և արժանաւորապէս գրաւենք զանոնք: Ինչու վհատինք կախաղանէ և թնդանօթէ. ասոնք ազատութեան ճամբուն վրայ եղած փուշերէն աւանաստեղծին (չենսինչ) փոյթ մեզ տառապանք և տաքնապք. տառապիլ ի սէր ազատութեան՝ կենաց դիւցազնութիւնն է. ասնել անգուլ՝ խժգժութիւններն և չը յուսահատել՝ կուռելու և մրցելու զօրութիւնն է. ջարդել և ջարդուիլ ի սէր ազգային սուրբ իրաւունքներու՝ իբր յանդուգն հանդիսական կանգնել է ժամանակին դէպքերի առջև և համակերպել է այնպիսի վիճակի՝ որ մարդն ի վեր քան զմարդ՝ կը բարձրացնէ: Այս զգացմամբ սողորուած, ի գործ եղբարք, ներկայ պատմակա ըրպէն կը թելադրէ մեզ՝ թողուլ անտեղի քննադատութիւններն և յուսահատական խեղճող միջնորդութեն ցատքել այն ասպարէզ, ուր իրենց կոչման բարձրութեան վրայ կանգնած են մեր եղբայրները. ինչու չը միանայ մեր սրտերի մէն մի բարախում մեր եղբարց զգացման հետ և մէն մի լուծա ազգային ազատութեան սուրբ գործին: Անտարբերութիւնն ոճրագործութիւն է և քննադատութիւնն ու տատանումները դուռնաբացութիւն: Նշովք պիտի կարգայ մեզի ապագայ սերունդը եթէ դատարկ ձեռքով ներկայանանք իրեն եթէ թերանաւ մեր պարտականութեանց առջև:

ՀԻՄՆԵԱՅ.

ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ.

Հնչակեան Կուսակցութեան Պատգ. Բնդհ. Ժողովը ներկայիս կը յայտարարէ, որ համաձայն իր երկրորդ նիստին մէջ կայացուած որոշման՝ այն ամեն Վկայադրերը, որ մինչև ներկայ թիւը կը կրեն Հնչակեան գործիչներն իբրև ներկայացուցիչներ, պատգամաւորներ կամ գործադիր անդամներ, այլ ևս կորցրած են իրենց զօրութիւնը և կը համարուին չեղեալ: Ներկայ թիւէս սկսեալ ամեն հարկ եղած Հնչակեաններուն կուղարկուին պաշտօնական նորոգուած Վկայադրեր Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի կողմէ:

17 Սեպտեմբեր 1896.

Լճեղօն.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀԵՉԱԿ»-Ի.

ԼՕՆԴՕՆ.